## Արձանագրություն N 2

«ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/8» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17.08.2016 թ.
ժ. 11:00

Մասնակցում էին.

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Ջանջուղազյանը, |
| Հանձնաժողովի անդամներ | Ռ. Եղիազարյան, /գնահատող/, |
| | Ռ. Խոջայանը /գնահատող/, |
| | Գ. Գևորգյանը /բացող/, |
| | Լ. Մելիքյանը /բացող/, |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Ավետիսյանը |

### 1.Բանակցային ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը 24458530 ՀՀ դրամ է.

բ) Բանակցային ընթացակարգի հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | Մասնակցի անվանումը | Հասցե |
|---|---|---|
| 1 | <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ | Gamshin-ltd@rambler.ru |
| 2 | <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ | khach_bild_group@rambler.ru |
| 3 | <<Աբակ>> ՍՊԸ | abak500@yandex.ru |
| 4 | <<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ | namenased@mail.ru |

գ) Բոլոր Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,

դ) <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ-ի, <<Աբակ>> ՍՊԸ-ի և <<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը (Ներառյալ գնի առաջարկները, հայտի ապահովումները և վճարման պահանջագրերը) հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

ե) <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ-ն հայտի ապահովումը /տուժանքի մասին համաձայնագիր/ և կից վճարման պահանջագիրը ներկայացրել է մեկ PDF փաստաթղթով (մեկ ֆայլով), որում՝ փաստաթղթերի հաստատման համար հրավերով պահանջվող՝ Մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությունն առկա է միայն տուժանքի համաձայնագրի էջում:

զ) Մասնակիցների կողմից առաջարկած գները հետևյալն են.

(ՀՀ դրամ)

| Մասնակցի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ | 16000000 | 650000 | 333000 | 19980000 |
| <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ | 18178637 | 1999650 | 4035657 | 24213944 |
| <<Աբակ>> ՍՊԸ | 16900000 | 1690000 | 3708000 | 22308000 |
| <<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ | 16588072 | 1161165 | - | 17749237 |

2. Հանձնաժողովի սույն նիստը ընդհատելու մասին

Ընդունել ի գիտություն, որ.

ա) Սույն արձանագրության 1.1 կետի ե) ենթակետով արձանագրված փաստից՝ գնահատող հանձնաժողովի համար պարզ չէ թե Մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությունը վերաբերում է միայն տուժանքի համաձայնագրին թե մեկ PDF փաստաթղթով ներկայացված երկու փաստաթղթերին էլ /նաև վճարման պահանջագրին/:

բ) Սույն արձանագրության ա) ենթակետով արձանագրված ստորագրությունը վճարման պահանջագրին վերբերելու կամ չվերաբերելու /նմանատիպ/ փաստը ճշտելու համար՝ ՀՀ <<ՔՆՔԾԻԳ>> պետական հիմնարկը 15.08.2016 թ. N ՄՔ/1-17746 գրությամբ /կցվում է/ դիմել է լիազոր մարմնին, համապատասխան պարզաբանում տալու խնդրանքով:

գ) Գնահատող հանձնաժողովի սույն նիստը ընդհատել մինչև լիազոր մարմնի կողմից վորոհիշյալ գրության պատասխանի ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ն,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ Ռ. Եղիազարյան

Ռ. Խոջայան

Գ. Գևորգյան

Լ. Մելիքյան

Քարտուղար՝ Հ. Ավետիսյան

/

# Արձանագրություն N 3

«ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/8» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23.08.2016 թ.
ժ. 11:00

Մասնակցում էին.

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Զանջուղազյանը, |
| Հանձնաժողովի անդամներ | Ռ. Եղիազարյան, /գնահատող/, |
| | Ռ. Խոջայանը /գնահատող/, |
| | Գ. Գևորգյանը /բացող/, |
| | Լ. Մելիքյանը /բացող/, |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Ավետիսյանը |

1. Բանակցային ընթացակարգի հայտերի բացման մասին /Շարունակություն/
(Ա. Զանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն.

-Բանավոր հարցման արդյունքում պարզվել է, որ <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից մեկ PDF փաստաթղթով (մեկ ֆայլով) տուժանքի մասին համաձայնագրի վրա առկա՝ Մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությունը վերաբերում է PDF փաստաթղթի բոլոր էջերին. հետևաբար՝ նաև վճարման պահանջագրին,

1.2 Ուժը կորցրած ճանաչել գնահատող հանձնաժողովի կողմից 17.08.2016 թ. 2. կետով ընդունված՝ հանձնաժողովի նիստի ընդհատման մասին որոշումը,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Բանակցային ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին
(Ա. Զանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովն որոշեց հաստատել բանակցային ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

| h/h | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| 1 | <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ | Անբավարար |
| 2 | <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ | Բավարար |
| 3 | <<Աբակ>> ՍՊԸ | Անբավարար |
| 4 | <<ՆԱՄԵՆԱՍԵՂ>> ՍՊԸ | Անբավարար |

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

2.2 Հիմք ընդունելով <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ-ի հայտի ստացած <<Անբավարար>> գնահատականը՝ հանձնաժողովը մերժեց <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ -ի բանակցային ընթացակարգի հայտը հետևյալ հիմնավորմամբ.

-Հայտում առկա փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

2.3 Հիմք ընդունելով <<Աբակ>> ՍՊԸ-ի հայտի ստացած <<Անբավարար>> գնահատականը՝ հանձնաժողովը մերժեց <<Աբակ>> ՍՊԸ-ի բանակցային ընթացակարգի հայտը հետևյալ հիմնավորմամբ.

-Հայտում առկա փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

2.4 Հիմք ընդունելով <<ՆԱՄԵՆԱՄԵԴ>> ՍՊԸ-ի հայտի ստացած <<Անբավարար>> գնահատականը՝ հանձնաժողովը մերժեց <<ՆԱՄԵՆԱՄԵԴ>> ՍՊԸ-ի բանակցային ընթացակարգի հայտը հետևյալ հիմնավորմամբ.

-Հայտում առկա փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

### 3. <<ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/6>> ծածկագրով բանակցային ընթացակարգի <u>առաջին տեղ զբաղեցնող մասնակցի մասին</u>

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետով ընդունված որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետը՝ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, հանձնաժողովը որոշեց <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/8>> ծածկագրով բանակցային ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող Մասնակից հայտարարել <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ-ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ – 0:

### 4. ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնելու և 1-ին տեղ <u>զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին</u>

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 24.08.2016թ. հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

4.2 24.08.2016թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ-ին, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

**5. Բանակցային ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի**
**<u>անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>**
(Ա. Զանջուղազյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի օգոստոսի 30-ին ժամը 11:30-ին ՀՀ Քաղաքաշինության նախարարությունում ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ 448 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Ա. Զանջուղազյան

Անդամ՝ Ռ. Եղիազարյան

Ռ. Խոջայան

Գ. Գևորգյան

Լ. Մելիքյան

Քարտուղար՝ Հ. Ավետիսյան